19 մարտի 2020 թվականի N 374 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 752-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով.

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Անվտանգության խորհրդի գրասենյակի կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին» N 752-Լ որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1. «Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի

1) «Ռազմական անվտանգության վարչություն» ենթաբաժնի «Ռազմաքաղաքական համագործակցություն բաժին» պարբերությունում՝ 23-րդ կետի «2» թիվը փոխարինել «1» թվով և «Ընդամենը 5» բառերը փոխարինել «Ընդամենը 4» բառերով.

2) «Ընդամենը 43» բառերը փոխարինել «Ընդամենը 42» բառերով:

2. Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 6.1-ին կետով.

«

6.1.	Գրասենյակի ղեկավարի օգնական	1

»:

3. 6.1-ին կետից հետո երկու տողերը շարադրել նոր բովանդակությամբ հետևյալ խմբագրությամբ՝

«

Ընդամենը	13
Ընդամենը	1+13

»: